ՀՏԴ:947.925

Doi:10.54503/0135-0536-2025.1-331

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱԶՄԱՀԱՏՈՐՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Մարտի 18-ին ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի առաջին հատորի երկրորդ գրքի շնորհանդեսը: Հատորի ստեղծմանը մասնակցել են Հին Հայաստանի պատմության տարբեր ընագավառների առաջատար գիտնականներ: Պատասխանատու խմբագիրն է ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ., պրոֆ., ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը*: Այս հրատարակությունն ունի գիտաքաղաքական մեծ նշանակություն: Հայ ժողովրդի պատմության նախորդ ակադեմիական բազմահատորյակի առաջին հատորը հրատարակվել էր ավելի քան կես դար առաջ՝ 1971 թվականին:*

Հատորը ներառում է Ուրարտուի (Բիայնիլի, Արարատի, Վանի), Երվանդունիների թագավորությունների, Արտաշեսյանների գահակալումից մինչև Տրդատ Գ Մեծ Արշակունու օրոք քրիստոնեության ընդունման ժամանակաշրջանների պատմությունը՝ ընդգրկելով նաև տվյալ դարաշրջանների միջազգային հարաբերությունները, սոցիալ-տնտեսական, մշակութային, գաղափարաբանական և մի շարք այլ հիմնահարցեր: Գիրքը շարադրված է հարուստ աղբյուրագիտական, հնագիտական պեղումների արդյունքում ստացված տեղեկությունների և գիտական գրականության համակողմանի օգտագործմամբ:

Գրքի բովանդակության կազմման և պատրաստման գործում կարևոր դեր է ունեցել հայ վաստակաշատ պատմաբան, լուսահոգի Արտակ Մովսիսյանը: Խմբագրման աշխատանքների իրականացման գործում մեծ աշխատանք է կատարել Պատմության ինստիտուտի Հին դարերի բաժինը: Պատասխանատու խմբագրի տեղակալն է նույն բաժնի աշխատակից Վահե Սարգսյանը:

Գրքում որոշակիորեն խմբագրվել և ընդգրկվել են նաև խորհրդային տարիներին հրատարակված նախորդ հատորի մի շարք հայ մեծանուն գիտնականների աշխատություններ, ինչը մատնանշում է խոր ակնածանքն ու արժևորումն ինչպես նախորդ հատորի, այնպես էլ նրա հեղինակների նկատմամբ:

Շնորհանդեսի ժամանակ բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը*: Այնուհետև հատորի համահեղինակներից պ. գ. դ.* Երվանդ Գրեկյանը*, պ. գ. թ.* Սիմոն Հմայակյանը*, պ. գ. թ.* Ռուսլան Ցականյանը*, պ. գ. դ.* Հայկ Ավետիսյանը*, պ. գ. դ.* Ռուբեն Մանասերյանը*, պ. գ. թ.* Գոհար Վարդումյանը *ներկայացրին իրենց կողմից շարադրված բաժինների և, ընդհանրապես, այս ակադեմիական աշխատության մյուս հատվածների կարևորությունը, արդիականությունն ու օգտագործված բազմաթիվ նորովի մոտեցումներն ու հարցադրումները: Շնորհանդեսի ժամանակ ելույթներ ունեցան ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. դ.* Կարեն Խաչատրյանը*, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ. գ. թ.* Մխիթար

Գաբրիելյանը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պ. գ. թ. Էդգար Հովհաննիսյանը, *ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պ. գ. դ.* Էդիկ Մինասյանը, *Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պ. գ. թ.* Էդիկ Գևորգյանը, *ԳԱԱ փոխնախագահի ժամանակավոր պաշտոնակատար, պ. գ. դ., ԳԱԱ թղթակից անդամ* Պավել Ավետիսյանը, *ինչպես նաև՝ Պատմության ինստիտուտի մի շարք աշխատակիցներ: Եզրափակիչ ելույթով հանդես եկավ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար* Յուրի Սուվարյանը*: Նա մասնավորապես նշեց, որ ավարտին են մոտենում «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի առաջին հատորի առաջին գրքի պատրաստման աշխատանքները, որն իրականացվում է Պատմության ու Հնագիտության և ազգագրության ինստիտուտների համատեղ ջանքերով:*

Շնորհանդեսի ժամանակ ներկաների կողմից հատուկ ընդգծվեց այն հանգամանքը, որ տասնյակ տարիներ անց սեղանին է դրվել նոր մոտեցումներով ու հարցադրումներով հագեցած մի բազմաբովանդակ ակադեմիական աշխատանք, որտեղ ակներև մատնացույց են արվում Հին Հայաստանի պետականության տարբեր ժամանակաշրջանների շարունակականությունն ու ժառանգականությունը:

ՄԻՔԱՅԵԼ ԲԱԴԱԼՅԱՆ
Պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի
պատմության բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար
«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», ՄԱՐՏ, № 3, 2025 Թ.